

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 28 Յունուարի, 2008

Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների մասին լայն տեղեկություններ հաղորդելու և իւրաքանչիւր թեկնածուի նախընտրական ծրագիրը ժողովրդին ներկայացնելու և քննարկելու նպատակով ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախումբը ձեռնարկել է հեռուստատեսային յատուկ ծրագիր, որի առաջին և երկրորդ թողարկումները եթեր արձարկուեցին Յունուարի 16-ին և 23-ին, երեկոյեան ժամը 9-ից 10-ը «Հորիզոն» հեռուստաընկերութեամբ: Ուղիղ եթերով հեռարձակուող սոյն հեռուստահաղորդումները շարունակուել են մինչեւ նախագահական ընտրությունների աւարտը: Հեռուստահաղորդումների ընթացքում քննարկումներից բացի, ցուցադրուում են նաեւ տեսահաղորդումներ նախագահական թեկնածուների քարոզարշաւների և Հայաստանի զանազան շրջաններում նրանց ունեցած ելոյթների մասին:



Երեքշաբթի, Յունուար 22-ին ՀՀԴ Գլխորդի Հայ Դատի Յանձնախմբի գլխաւորութեամբ, քաղաքի բազմաթիւ հայ քուէարկողներ ներկայ գտնուեցին քաղաքապետական խորհրդի նիստին, բողոքելով և իրենց ձայնը լսելի դարձնելով խորհրդի այն օրինագծի վերաբերեալ, որը միտում է փոփոխութեան ենթարկել տանից նամակատան միջոցով քուէարկելու գործիղ օրէնքը: Ելոյթ ունենալով քաղաքապետական խորհրդի առջեւ Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները և Գլխորդի հայ համայնքի գործիչները շեշտեցին, որ այս նոր միջոցառումը զգալիօրէն կը նագեցնի յատկապէս հայ տարեց քուէարկուների թիւը, ովքեր ընտրությունների ժամանակ թարգմանական օժանդակութիւն են ստանում թեկնածուների քարոզարշաւային գրասենեակներից: Քաղաքապետական նիստի ընթացքում հայերից բացի, ելոյթ են ունեցել նաեւ կորեացի գործիչներ, ովքեր եւս իրենց բողոքն են արտայայտել Գլխորդի քաղաքապետական խորհրդի սոյն միջոցառման նկատմամբ: Ամենայն հաւանականութեամբ քաղաքապետական խորհուրդը այս հարցը քուէարկութեան կը դրնի առաջիկայ շաբթուայ ընթացքում:



Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեանը անցեալ շաբաթ նշանակուել է խորհրդարանի բիւջետային հարցերով յանձնախմբի անդամ, որը կարելոր պաշտօն է համարում նահանգային կառավարական կառոյցում: Պատգամաւոր Փոլ Գրիգորեանի նշանակումը առաջադրուել է նահանգային խորհրդարանի նախագահ Ֆաբիան Նունիազի կողմից: «Ես շատ ուրախ եմ, որ խորհրդարանի նախագահը ինձ է վստահել այս խիստ կարելոր պաշտօնը», - ասել է պատգամաւոր Գրիգորեանը և վստահեցրել, որ ամէն ջանք կը գործադրի, որպէսզի Կալիֆորնիայի նահանգը պատասխանատուութեամբ ներդրումներ կատարի իր ապագայի համար:



Սան Ֆրանցիսկոյի «Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական» վարժարանի խնամակալ մարմնի նախաձեռնութեամբ, Կիրակի, Յունուարի 13-ին, Հայ կենտրոնի «Սարոյեան» սրահում տեղի է ունեցել մեծարման երեկոյ վարժարանի նախկին ու ներկայ բարերարների ու նուիրատուների պատուին: Միջոցաջմանը ներկայ են գտնուել Հ.Յ.Դ. Սան Ֆրանցիսկոյի «Քրիստափոր» կոմիտէութեան և շրջանի ազգային, հասարակական կազմակերպութիւնների ու միութիւնների ներկայացուցիչները: Միջոցառմանը ելոյթ է ունեցել վարժարանի յատուկ ծրագրերի պատասխանատու Էդիթա Հորութեանը, որն ասել է, թէ. «Ինձ համար մեծ հաճոյք է աշխատել այս կրթօջախում, որն իր մէջ ներառում է Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից ու Հայաստանից ժամանած ընտանիքների զաւակներ. այս կրթօջախը, որը հիմնադրուել է մի շարք բարերարների կողմից, յանձնու Գռուզեանի, Չաքարեանի, Հրաչ Դարբինեանի և ուրիշների, մինչեւ այսօր տուել է 300-ից աւելի շրջանաւարտներ»: Միջոցառման աւարտին

գեղարուեստական յայտագրով հանդես են եկել դպրոցի աշակերտները, կատարելով հայկական ժողովրդական երգեր ու պարեր:

Այս լուրերը տրամադրում են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: